

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կարիագառ» ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Յ. Կարապետյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱԼ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Երևան քաղաքի Զանաթեռ-Չեյթուն վարչական շրջանի ծառայողական ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն Էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն Էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Զննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ Էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով

(գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է Էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում Էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **մինչև 900000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի (համաձայնագրի) վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ **ՎԳ=ՄԳ/ԼԳxԾxԶ**, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է:

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է:

ԼԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է:

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է:

Զ-ն մատուցված ծառայության քանակն է:<sup>20</sup>

#### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի **0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:**<sup>21</sup> Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության **0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:**

<sup>21</sup> Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի **0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական)** տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## **6. ԱՆՀԱՂԹԱՅԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնություն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է \_\_\_\_\_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:<sup>25</sup>

7.16 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ**

Երևանի քաղաքապետարան  
ք. Երևան, Արգիշտի փող. 1  
Կենտրոնական գանձապետարան  
ՀՎՀՀ՝ 02593108

Է. Կիրակոսյան  
(ստորագրություն)  
Կ.Տ.



**Կ Ա Տ Ա Ր ՈՂ**

«Կարիագառ» ՍՊԸ  
ք.Երևան, Թբիլիսյան խճ.29/25  
«Արդշինբանկ» ՓԲԲ  
ՀՀ՝ 2480100076100000  
ՀՎՀՀ՝ 01001431

Հ. Կարապետյան  
(ստորագրություն)  
Կ.Տ.



Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

<sup>25</sup> Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՆ ՎՃԱՐԱԿԱՏՈՒՅՑ\*

Ծառայության							
Ծ/Գ	գլխամտերի պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ գՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Չ/Մ	ընդհանուր գինը /ՄԻՆԵԼ/	ընդհանուր քանակը	կատարման	
						հասցեն	ժամկետը
1	50111130 /512	«Տոյոտա-կորոլա» 2014 թ. տեխնիկական սպասարկում և ընթացիկ նորոգում: Կատարողը պետք է իրականացնի SU-1 և SU-2 ներառվող ծառայությունների մատուցումը, ղեկավարման, սնման, յուղման, սառեցման, արտաձման, արգելակային և կցորդման համակարգերի, ավտոմատ փոխանցման տուփի, բաշխիչ տուփի, կարբուրատյին լիսեռի, առջևի և հետևի կամրջակներին, ղեկային մեխանիզմի և էլեկտրասարքավորումների ընթացիկ վերանորոգման և համապատասխան պահեստամասերի փոխարինման ծառայությունները և ապահովի համապատասխան պահեստամասերով և նյութերով:	ոչ	900000	1	Ք. Երևան, Դ. Անհաղթի 11	Պայմանագիրն (համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2021թ.

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**  
 Երևանի քաղաքապետարան  
 ք. Երևան, Արգիշտի փող. 1  
 Կենտրոնական գանձապետարան  
 ԴՎՀՀ՝ 02593108  
 (ստորագրություն)  
 Կ.Տ.



**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**  
 «Կարիագառ» ՍՊԸ  
 ք. Երևան, Թբիլիսյան խճ.29/25  
 «Կորշինբանկ» ՓԲԸ  
 ԴԴ՝ 2480100076100000  
 ԴՎՀՀ՝ 01001431  
 (ստորագրություն)  
 Կ.Տ.



Գ. Կարապետյան

Յ/հ	Ընթացիկ, միջին և հիմնական նորոգման աշխատանքների անվանումները	Toyota Corola
1	Բռնկման համակարգի ստուգում	անվճար
2	Կցորդման համակարգի ստուգում	անվճար
3	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	անվճար
4	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	անվճար
5	ABS համակարգի ստուգում	անվճար
6	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	անվճար
7	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	անվճար
<b>1. Շարժիչ</b>		
8	Շարժիչի հանում և տեղադրում	0
9	Շարժիչի քանդում արատավորում և հավաքում	0
10	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	0
11	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	0
12	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով	0
13	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	0
14	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	0
15	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	0
16	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	0
17	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	0
18	Ծնկածն լիսեռի հղկում	0
19	Ծնկածն լիսեռի փոխարինում	0
20	Ծնկածն լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	0
21	Ծնկածն լիսեռի ատամնասնիվի փոխարինում	0
22	Ծնկածն լիսեռի ուղղում	0
23	Ծնկածն լիսեռի առջևի խցուկի փոխարինում	0
24	Ծնկածն լիսեռի հետևի խցուկի փոխարինում	0
25	Շարժիչի բլոկի փոխարինում	0
26	Շարժիչի զլանի փոխարինում 1 հատ	0
27	Շարժիչի բլոկի հղկում	0
28	Մխոցի փոխարինում 1 հատ	0
29	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	0
30	Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	0
31	Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում	0
32	Փոկանիվի փոխարինում	0
33	Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում	0
34	Շարժիչի շղթայի փոխարինում	0
35	Յուղի մղիչի շղթայի փոխարինում	0
36	Շարժիչի վանոսների փոխարինում	0

37	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	0
38	Շարժիչի քարտերի փոխարինում, միջադիրի փոխարինումով	0
39	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	0
40	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	0
41	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	0
42	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում	0
43	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	0
44	Շարժիչի յուղի մղիչի կարգավորում	0
45	Յուղի մղիչի թաթիկի փոխարինում	0
46	Յուղի ծորակի փոխարինում	0
47	Օդաքաշակ փողոսակի փոխարինում	0
48	Շարժիչի կոմպոնետորի փոխարինում (տուրբոմղիչ)	0
49	Շարժիչի վառելիքի բարձր ճնշման մղիչի փոխարինում	0
50	Շարժիչի բարձրիկի հանում և տեղադրում կամ փոխարինում	0
51	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	0
52	Ուղղորդիչ վրանների փոխարինում	0
53	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	0
54	Շարժիչի կափույրի փոխարինում	0
55	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	0
56	Մխոցամատի փոխարինում	0
57	Շարժիչի շարժաթևի փոխարինում	0
58	Մխոցային օղակների փոխարինում 1 կ-տ	0
59	Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում	0
60	Ատամանակիվի փոխարինում	0
61	Ատամանակիվի փոկի փոխարինում	0
62	Ատամանավոր փոկի պատյանի փոխարինում	0
63	Սուխարիկ փոխարինում	0
64	Շարժիչի կալունի փոխարինում	0
65	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	0
66	Շարժիչի փոկի հողվակի փոխարինում	0
67	Շարժիչի հողվակի առանցքակալի փոխարինում	0
68	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	0
69	Շարժիչի յուղի արանքաչափիչի (Բցտ) իրանի փոխարինում	0
70	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	0
71	Շարժիչի փոկի ձգիչի նորոգում	0
72	Շարժիչի գամասեղի փոխարինում	0
73	Շարժիչի գամասեղի փոխարինում բնիկի նորոգումով	0
74	Գլխիկի հեղույսի փոխարինում	0
75	Ծնկաձև լիսեռի հեղույսի փոխարինում	0
76	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	0

77	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	0
<b>2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ</b>		
78	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	2000
79	Ավտոմեքենայի յուղում	2000
80	Համակարգչային ախտորոշում, թերութունների վերացմամբ	5000
81	Յուղի ռադիատորի փոխարինում	10000
82	Յուղի ռադիատորի նորոգում	20000
83	Յուղի զտիչի փականի փոխարինում	5000
84	Արտածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում	20000
85	Ներածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում	20000
86	Արտածման կալեկտորի միջադիրի փոխարինում	10000
87	Ներածման կալեկտորի միջադիրի փոխարինում	10000
88	Վառելիքի փողրակի փոխարինում	5000
89	Վառոցքի մոմի փոխարինում 1 կ-տ	2000
90	Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում	10000
91	Օդի զտիչի փոխարինում	1000
92	Կոնդիցիոների զտիչի փոխարինում	1000
93	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000
94	Օդի ծախսաչափիչի փողրակի հանում և տեղադրում	10000
95	Օդի զտիչի փողրակի հանում և տեղադրում	10000
96	Օդաքաշի փողրակի հանում և տեղադրում	10000
97	Ավտոմատ փոխանցման տուսի դեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000
98	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում 1 կ-տ	10000
99	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	10000
100	Բոցամուղի կողավորում	10000
101	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	10000
102	Բենզամղիչի փոխարինում	5000
103	Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխարինում	5000
104	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000
105	Բռնկման կարգավորում	5000
106	CO կարգավորում	5000
107	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000
108	Ղեկավարման բլոկի վերանորոգում	20000
109	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	20000
110	Վառելիքի բաքի մաքրում	30000
111	Արագարարի ոտնակի փոխարինում	10000
112	Արագարարի ոտնակի տվիչի փոխարինում	10000
113	Օդի ծախսի տվիչի փոխարինում	10000
114	Տրամյորի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000
115	Տրամյորի վերանորոգում	10000

116	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	10000
117	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	10000
118	Բենզոբաքի բենզոմոլիչի ցանցի փոխարինում	20000
119	Բենզոբաքի բենզոմոլիչի ցանցի մաքրում	20000
120	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	20000
121	Տվիչի փոխարինում	20000

### 3. Սառեցման և արտաճման համակարգ

122	Հովհարի փոխարինում	3000
123	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	3000
124	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	30000
125	Ռադիատորի շրջանակի փոխարինում	10000
126	Ծերտափեղկի փոխարինում	10000
127	Ծերտափեղկի կառավարման ձգածողի փոխարինում	10000
128	Ռադիատորի կալունակի փոխարինում	10000
129	Ռադիատորի փողրակի փոխարինում	10000
130	Կոնդիցիոների կոմպրեսորի հանում և տեղադրում կամ փոխարինում	20000
131	Կոնդիցիոների կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	20000
132	Կոնդիցիոների առանցքակալի փոխարինում	10000
133	Կոնդիցիոների ռադիատորի փոխարինում	10000
134	Կոնդիցիոների ռադիատորի նորոգում	20000
135	Կոնդիցիոների կոմպրեսորի նորոգում	20000
136	Ընդարձակող բաքի փոխարինում	10000
137	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	10000
138	Ջրի ծորակի փոխարինում	5000
139	Հովացման հիդրոկցորդի փոխարինում	5000
140	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	5000
141	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	20000
142	Հովհարի թեանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	20000
143	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	20000
144	Վառարանի ռադիատորի նորոգում	30000
145	Վառարանի շարժիչի փոխարինում	20000
146	Թերմոստատի փոխարինում	5000
147	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	5000
148	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	5000
149	Գններատորի փոկի փոխարինում	5000
150	Գններատորի փոկի ձգող հոլովակի փոխարինում	5000
151	Ջրի ռադիատորի վերանորոգում	5000
152	Թերմոստատի միջադիրի փոխարինում	5000
153	Սառեցման համակարգի օդահանում	5000
154	Խլարարի գոֆրայի փոխարինում	20000
155	Կատալիզատորի հանում	20000

156	Խլարարարի կատալիզատորի տվիչի փոխարինում	20000
157	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	20000
158	Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	10000
159	Խլարարի անուրի (xamyт) փոխարինում	10000
160	Խլարարի ներդիրի փոխարինում	10000
161	Խլարարի կախոցի փոխարինում	10000
162	Կալունակի փոխարինում	10000
163	Ռեզոնատորի փոխարինում	10000
164	Հովացման հեղուկի փոխարինում	2000

#### 4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ

165	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000
166	Աշխատանքային կամ գլխ. գլանի հիմնական նորոգում ներառյալ աշխատանքները	30000
167	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	10000
168	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000
169	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000
170	Կցորդման փողոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000
171	Կցորդման երկժանիի փոխարինում	10000
172	ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	30000
173	ՓՏ-ի հավաքածույի փոխարինում	30000
174	ՓՏ-ի փոխարինում	30000
175	ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում	30000
176	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում	30000
177	ՓՏ-ի համաժամիչի փոխարինում	30000
178	ՓՏ-ի և ԱՓՏ-ի հանում և տեղադրում	30000
179	ՓՏ-ի քանդում, արատավորում, հավաքում	30000
180	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000
181	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	5000
182	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	10000
183	ՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	10000
184	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	10000
185	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	10000
186	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	10000
187	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի վերանորոգում	10000
188	ՓՏ-ի բարձիկի փոխարինում	5000
189	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	10000
190	ՓՏ-ի յուղի փոխարինում	5000
191	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	20000
192	ԱՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	200000
193	ԱՓՏ-ի հավաքածույի փոխարինում	50000
194	ԱՓՏ-ի փոխարինում	50000
195	ԱՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	20000

196	ԱՓՏ-ի կոնվերտների հանում և տեղադրում կամ փոխարինում	10000
197	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	20000
198	ԱՓՏ-ի կցորդման գլխավոր գլանի կալունակի փոխարինում	20000
199	ԱՓՏ-ի սուլենոիդների փոխարինում	20000
200	ԱՓՏ-ի համակարգչի և սուլենոիդների փոխարինում	30000
201	ԱՓՏ-ի յուղի մղիչի փոխարինում	20000
202	ԱՓՏ-ի յուղի մղիչի խտաբուկների փոխարինում	20000
203	ԱՓՏ-ի ռադիատորի նորոգում	20000
204	ԱՓՏ-ի ռադիատորի փոխարինում	20000
205	ԱՓՏ-ի հիդրոագույցի փոխարինում	20000
206	ԱՓՏ-ի յուղի գտիչի փոխարինում	10000
207	ԱՓՏ-ի յուղի փոխարինում	5000
208	ԱՓՏ-ի գտիչի լվացում, մաքրում քարտերի հանում և տեղադրումով	20000

### 5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ

209	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	50000
210	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում	15000
211	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում, հավաքում	20000
212	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	15000
213	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	15000
214	Բաշխիչ տուփի դիաֆրագմաների փոխարինում	15000
215	Բաշխիչ տուփի շարժաբերի փոխարինում	15000
216	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում	15000
217	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում	15000
218	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում	15000
219	Բաշխիչ տուփի երկժանիի փոխարինում	15000
220	Բաշխիչ տուփի բարձրի փոխարինում	5000
221	Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում	5000
222	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	5000
223	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000
224	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	5000
225	Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	15000
226	Տվիչի փոխարինում	5000
227	Բաշխիչ լիսեռի ատամնանիվի փոխարինում	10000
228	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000
229	Բաշխիչ տուփի շղթայի փոխարինում	10000

### 6. Առջևի և հետևի կամրջակներ

230	Առջևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0
231	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման (ռեդուկտոր)քանդում, արատավորում և հավաքում	0
232	Առջևի կամրջակի կիսատնու հանում և տեղադրում կամ փոխարինում	0
233	Առջևի կամրջակի կիսատնու առանցքակալի փոխարինում	0

234	Առջևի կամրջակի կիսասունու առանցքակալի խտաբուկերի փոխարինում	0
235	Կամրջակի յուղի փոխարինում	0
236	Առջևի կամրջակի բռունցքի գնդածև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	0
237	Առջևի կամրջակի բլոկավորման համակարգի նորոգում	0
238	Առջևի կամրջակի տվիչի փոխարինում	0
239	Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	0
240	Չետևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0
241	Չետևի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և հավաքում	0
242	Չետևի կամրջակի մասնակի քանդում, արատավորում և հավաքում	0
243	Չետևի կամրջակի կիսասունու հանում և տեղադրում կամ փոխարինում	0
244	Չետևի կամրջակի կիսասունու առանցքակալի փոխարինում	0
245	Չետևի կամրջակի կիսասունու առանցքակալի խտաբուկերի փոխարինում	0
246	Չետևի կամրջակի բռունցքի գնդածև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	0
247	Չետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	0
248	Չետևի կամրջակի բլոկավորման համակարգի նորոգում	0
249	Կամրջակի տվիչի փոխարինում	0
250	Կամրջակի իրանի փոխարինում (կցսՍՍ)	0
251	Կամրջակի յուղի փոխարինում	0
<b>7. Կախոց</b>		
252	Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000
253	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000
254	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	5000
255	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000
256	Չետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000
257	Չետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	5000
258	Անվակունդի զամաստեղի և հեղյուսի փոխարինում(մեկ անիվի համար)	2000
259	Ձախ կամ աջ հողակապի խտաբուկերի փոխարինում	5000
260	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	5000
261	Առջևի գսպանակի փոխարինում	5000
262	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000
263	Պնևմոցնցամեղմիչի փոխարինում	5000
264	Պնևմոցնցամեղմիչի բարձիկների փոխարինում	5000
265	Հարվածամեղմիչի վռանների փոխարինում	5000
266	Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000
267	Ներքևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	5000
268	Ներքևի լծակի հեղույսի փոխարինում	5000
269	Հարվածիչի (բարձիկի փոխարինում)	5000
270	Անիվների պաշտպանիչի փոխարինում	5000
271	Շարժիչի պաշտպանիչի փոխարինում	5000

272	Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000
273	Վերևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	5000
274	Վերևի լծակի հեղույսի փոխարինում	5000
275	Չետևի վերևի լծակի վռանի փոխարինում 1 հատ	5000
276	Գնդե հողակապի պատյանի փոխարինում	5000
277	Գնդե հողակապի փոխարինում	5000
278	Գնդե հողակապի նորոգում	10000
279	Առջևի կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000
280	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	5000
281	Առջևի կայունարարի կալունակի փոխարինում	10000
282	Առջևի կայունարարի կանգնակի փոխարինում	10000
283	Չետևի կախոցի անվաքացքի կարգավորում	1000
284	Չետևի կայունարարի վռանների փոխարինում 1 հատ	5000
285	Չետևի կայունարարի կանգնակի փոխարինում	5000
286	Չետևի կայունարարի կալունակի փոխարինում	5000
287	Չետևի զսպանակների փոխարինում	10000
288	Չետևի ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000
289	Չետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000
290	Չսպանի փոխարինում	10000
291	Չսպանի վռանների փոխարինում 1 հատ	5000
292	Չետևի ցնցամեղմիչի փոխարինում	10000
293	Չետևի հարվածամեղմիչի վռանների փոխարինում	5000
294	Չետևի կախոցի սայլենտ-բլոկի սպասարկում	5000
295	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	5000

**8. Ղեկային մեխանիզմ**

296	Ղեկայունակի(USuSվՍՈ) հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	40000
297	Ղեկայունակի(USuSվՍՈ) առորիկի փոխարինում	10000
298	Ղեկայունակի (USuSվՍՈ) առանցքային սռնու փոխարինում	10000
299	Ղեկայունակի(USuSվՍՈ) խաչուկի փոխարինում	10000
300	Ղեկայունակի(USuSվՍՈ) վերանորոգման հավաքածույի փոխարինում	20000
301	Ղեկայունակի(USuSվՍՈ) քանդում, արատավորում, հավաքում	20000
302	Ղեկայունակի(USuSվՍՈ) կարգավորում	10000
303	Ղեկային մեխանիզմի ազդանշանի փոխարինում	5000
304	Ղեկային մեխանիզմի ժապավենի փոխարինում	5000
305	Ղեկային մեխանիզմի փոխակերպիչների հավաքածույի փոխարինում	5000
306	Ղեկային մեխանիզմի փոխակերպիչների հավաքածույի նորոգում	5000
307	Ղեկայունակի պատյանի փոխարինում	10000
308	Ղեկային մեխանիզմի փականքի փոխարինում	10000
309	Ղեկային մեխանիզմի փականքի և հակաառևանգման մեխանիզմի փոխարինում	20000
310	Ղեկային մեխանիզմի ղեկայունակի ամրացման անուրի փոխարինում	10000
311	Ղեկային ձողի առանցքակալի փոխարինում	10000

312	Ղեկային կալոււնի ձգանների փոխարինում	10000
313	Ղեկային կալոււնի միջին ձգանի փոխարինում	10000
314	ՂԿ-ի առանցքակալի կամ վրանների փոխարինում	10000
315	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3000
316	Ղեկի էլեկտրական կարգավորիչի փոխարինում	3000
317	Ղեկային ճոճանակի նորոգման լրակազմի փոխարինում	10000
318	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000
319	Ֆիդրոուժեղարարի մղիչի փոխարինում	10000
320	Ֆիդրոուժեղարարի մղիչի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները	20000
321	Ֆիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000
322	Ֆիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում	10000
323	Ֆիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում	10000
324	Ֆիդրոուժեղարարի վերանորոգման հավաքածուի փոխարինում	20000
325	Ղեկային ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000
326	Ղեկային ձողի գնդե հողակապի նորոգում	10000
327	Ղեկային ձգածողի ձգանների հանում և տեղադրում կամ փոխարինում	5000
328	Ղեկի հանում տեղադրում կամ փոխարինում	5000
329	Ղեկային ձգածողի ծայրակալների փոխարինում	5000
330	Ֆիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխարինում	5000

**9. Արգելակային համակարգ**

331	Վակումային ուժեղարարի փոխարինում	20000
332	Վակումային ուժեղարարի փակակնի փոխարինում	5000
333	Գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000
334	Գլխ. գլանի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	20000
335	Աշխատանքային գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000
336	Աշխատանքային գլանի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	20000
337	Առջևի սոււպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000
338	Յետևի սոււպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000
339	Առջևի սոււպպորտի վերանորոգում	5000
340	Յետևի սոււպպորտի վերանորոգում	5000
341	Արգելակի վթարային արգելահանման լծակի փոխարինում	10000
342	Արգելակի վթարային արգելահանման լծակի նորոգում	10000
343	Արգելակային փողրակի փոխարինում	10000
344	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	10000
345	Արգելակային համակարգի օդահանում	2000
346	Յետևի սկավառակային կոճղակների փոխարինում	2000
347	Յետևի թմբուկային կոճղակների փոխարինում	2000
348	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	4000
349	Առջևի արգելակային սկավառակների հղկում 1 հատ	5000
350	Յետևի արգելակային սկավառակի փոխարինում 1 հատ	5000

351	Յետևի արգելակային սկավառակի հղկում 1հատ	5000
352	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3000
353	ABS-ի հանում և տեղադրում կամ փոխարինում	3000
354	ABS-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	10000
355	ABS-ի տվիչի փոխարինում	5000
356	ABS-ի էլեկտրական հաղորդալարերի փոխարինում	2000
357	Ձեռքի արգելակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000
358	Ձեռքի արգելակային մեխանիզմի վերանորոգում	10000
359	Ձեռքի արգելակի կոճղակների փոխարինում	5000
360	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000
361	Ձեռքի արգելակի ճոպանի վերանորոգում	10000
362	Յետևի արգելակների կարգավորում	3000
363	Արգելակային համակարգի լվացում	3000
364	Արգելակային հեղուկի փոխարինում	3000

#### 10. Էլեկտրասարքավորում

365	Գեներատորի հանում, տեղադրում կամ փոխարինում	5000
366	Գեներատորի քանդում և արատավորում, հավաքում	5000
367	Գեներատորի ստատորի փոխարինում	5000
368	Գեներատորի ռոտորի փոխարինում	5000
369	Գեներատորի լիցքավորման ռելեի փոխարինում	3000
370	Գեներատորի դիողային կամրջակի փոխարինում	1000
371	Գեներատորի առանցքակալի փոխարինում	5000
372	Գեներատորի փոկանիվի փոխարինում	2000
373	Հագոցի հարվածամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000
374	Մեկնարկիչի քանդում և արատավորում, հավաքում	7000
375	Մեկնարկիչի խարխիխի փոխարինում	5000
376	Մեկնարկիչի իրանի փոխարինում	5000
377	Մեկնարկիչի բռնիչի փոխարինում	3000
378	Մեկնարկիչի բենդեքսի փոխարինում	3000
379	Մեկնարկիչի ավտոմատի փոխարինում	3000
380	Մեկնարկիչի հետևի կափույրի փոխարինում	3000
381	Մեկնարկիչի ռելեի փոխարինում	3000
382	Մեկնարկիչի ածուխների փոխարինում	2000
383	Մեկնարկիչի պատյանի փոխարինում	3000
384	Ազդանշանի կարգավորում	2000
385	Ազդանշանի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000
386	Առջևի լապտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	2000
387	Հակամշուշային լապտերի տեղադրում	1000
388	Լապտերի կենտրոնական փոխակերպիչի փոխարինում	1000
389	Սարքերի պանելի հանում և տեղադրում	1000
390	Յետևի լապտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	1000

391	Առջևի լապտերների կարգավորում	1000
392	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	1000
393	Բռնկման կողպեքի հպակի փոխարինում	1000
394	Վառոցքի կոճի հանում և տեղադրում	1000
395	Ինդուկցիոն կոճի հանում և տեղադրում	1000
396	Լուսամփոփի լարերի փոխարինում	1000
397	Լուսամփոփի լարերի նորոգում	2000
398	Վազբաչափի փոխարինում	10000
399	Վազբաչափի ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000
400	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	5000
401	Ապակեվազիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000
402	Ապակեվազիչի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000
403	Ջեռուցիչի շարժիչի փոխարինում	5000
404	Ջեռուցիչի օդի հոսքի կարգավորիչների փոխարինում	5000
405	Ջեռուցիչի օդի հոսքի կարգավորիչների նորոգում	10000
406	Ապահովիչների փոխարինում	1000
407	Դռների կենտրոնական փակակնի հանում և տեղադրում	10000
408	Դռների էլ/փակակնի փոխարինում	10000
409	Ապակեամբարձիչի փոխարինում	10000
410	Ապակեամբարձիչի շարժիչի փոխարինում	10000
411	Մագնիտոլայի տեղադրում	10000
412	Էլեկտրական տվիչների փոխարինում	3000
413	Էլեկտրական անջատիչների փոխարինում	3000
414	Մարտկոցի փոխարինում	2000
415	Մարտկոցի կլեյմաների փոխարինում	2000
416	Ակումյատորի դրական էլեկտրոլարի փոխարինում	1000
417	Ակումյատորի բացասական էլեկտրոլարի փոխարինում	1000
418	Պարկտրոնիկի տեղադրում	10000
419	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	2000
420	Էլ/հաղորդալարերի հիմն. խուրցի փոխարինում կամ նորոգում	20000
421	Առջևի կամրջակի վակուումային շարժիչի փոխարինում	10000
422	Բաժանարար տուփի վակուումային շարժիչի փոխարինում	10000
423	Էլ/հաղորդալարերի երկրորդ. խուրցի փոխարինում կամ նորոգում	10000
424	Ավտոմեքենայի ալեհավաքի փոխարինում	5000
425	Ավտոմեքենայի ալեհավաքի նորոգում	10000
426	Էլ/ կոճակի փոխարինում	3000
427	Փոխանջատիչ ղեկի փոխարինում	3000
428	Քսենոնի բլուկի փոխարինում	3000
429	Էլեկտրական շտեյլերի փոխարինում	1000
430	Էլեկտրական անջատիչի փոխարինում	1000
431	Վառոցքի լարերի խրձի փոխարինում	1000

432	Ջրի ցողիչի փոխարինում	3000
433	Բեռնախցիկի հարվածամեղմիչի փոխարինում	3000
434	Բամպերի փոխարինում	10000
435	Բամպերի կալունակի փոխարինում	10000
436	Բամպերի բալկայի փոխարինում	10000
437	Բամպերի պենոպլաստի փոխարինում	10000
438	Բեռնախցիկի փոխարինում	10000
439	Բեռնախցիկի նորոգում	10000
440	Բեռնախցիկի փակակնի փոխարինում	5000
441	Բեռնախցիկի ռետինի փոխարինում	5000
442	Դռան պաստառի փոխարինում	3000
443	Հագոցի փակակնի փոխարինում	3000
<b>11. Ավտոմեքենայի սրահ</b>		
444	Տաքացուցչի ղեկավարման բլոկի հանում, տեղադրում կամ փոխարինում	0
445	Տաքացուցիչ ռադիատորի հանում, տեղադրում կամ փոխարինում	0
446	Արտաքին հայելիների տեղադրում կամ փոխարինում	0
447	Դռան պաստառի հանում և տեղադրում	0
448	Նստարանի հանում տեղադրում կամ փոխարինում	0
